

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.542-2

2-48

ՊՐՈՒԵՏՈՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՑԵԿԻՆԵՐԻ, ՄԻՍՑԵԿԻ


4910

ԱՐՏԵՄ ՍՈԼՈՄՈՆՈՎԻՉ ԴՈԼՄԱԶՈՎԸ ԲԱՆՏՈՒՄ

ՏՐԵԳԻ-ԿՈՄԵԳԻԸ 2 ԳՈՐԾՈՂՈՒԹ. 5 ՊԵՏԿ.

ԳԵՎՈՐԳ ՂԱՐԱԶՅԱՆԻ

(Ս. Տ. ԱՐԿՈՄԵԿ)



891.99

2-46

ԹԻՖԼԻՍ—1926

NOV 2011

891.99
Պ-46

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻՍՑԵՐԻ

1001
2283

891.542-2 ՂԱՐԱՋԱՆԻ

2-54 ԱՐՏԵՍ ՍՈԼՈՎՅՈՎ-ԻՑ ԴՈԼՄԱԶՈՎԸ ԲԱՆՏՈՒՄ



1001
2283

ԱՐՏԵՍ ՍՈԼՈՎՅՈՎԻՉ ԴՈԼՄԱԶՈՎԸ ԲԱՆՏՈՒՄ

ՏՐԵԿԻ-ԿՈՄԵԿԻՆ 2 ԳՈՐԾՈՂՈՒԹ. 5 ՊԵՏԿ.

ԳԵՎՈՐԳ ՂԱՐԱԶՅԱՆԻ
(Ս. Տ. ԱՐԿՈՄԵԿ)

4910



ԹԻՖԼԻՍ—1926

4910

Ք Ո Ր Մ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

1. Արտեմ Սուրճոնովիչ Դուլազով, 2-րդ դիլիի հարուստ վաճառական—կալվածատեր 55 տարեկան:
2. Կարո Խաժամուժյան—գաշնակցական խմբապետ:
3. Բանտային վերակացու Նիկիտենկո:
4. Պարաշնիկ Սանդրո:
5. Բանտապետ:
6. Ժանդարմ:
7. Լուսանկարիչ:
8. Բանտային բժիշկ:
9. Ժանդարմական ընտմիստր:

Կալանավորներ, զինվորներ և այլն:

Գործողությունը կատարվել է Թիֆլիսի Մեռեխի բանտում
1906 թվին:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏԿԵՐ 1.

Բ Ա Ն Տ Ո Ւ Ս

Բանտային կամերա, վորի մեջ կարող են տեղավորվել միայն 4—5 մարդ: Կես գիշեր ե կ մութ. կամերայում միայն վառ ե մի փոքրիկ ժեստի լամպա, վորը աղոտ լուսավորում ե սենյակը: Այնտեղ կան մի հին, գրեթե անպետք սեղան, 2 տարուրետ. կա ե մի անկյունում փոքր հարկավորության համար մի գարշոկ, ինչպես ե նույն նպատակով մի փոքր առանց ծածկոցի բաց տակառ, վորը բերված ե հատուկ այդ գիշեր կալանավորներ շատ լինելու պատճառով:

Շոգե, խեղտոց. միմիայնց կողքին սեղմ պառկած են հատակի վրա 15—20 հոգի. քնած են ամենքը, բայց շատ անհանգիստ. զանազան ձայներ են հանում «ոֆ, ուֆ» «վայ» ե այլն. քնած տեղը շարժվում են ե մի կողքից մյուս կողքը շուտ գալիս ընդհարվում են ե այն աստիճան ցավ են պատճառում միմյանց, վոր քնի մեջ բնազդաբար հայտանքներ են թափում. «ոհ, պաղլեցներ», «չան վորդիք», «սրիկաներ», ե այլն:

Ամենից շատ անհանգիստ ե Արտեմ Սուրմոնովիչ Դուվազովը, շուտ շուտ զարթնում ե, սրտնեղությամբ «ախ ու վախ» քաշելով. նստում ե երբեմն իր դռակի վրա, ինչ վոր անվորոշ ձայներ ե հանում, նայում ե շուրջը, տեղաշորին, սպիտակեղենին՝ փնտրում ե բաղինջներ, կոտորում նրանց ե դարձյալ թեք ընկնում նընջում: Կամերայի խեղտիչ մթնոլորտը, բաղինջները, լուսաները ե այլ միջատները ե ինչ վոր ջրի ալիքների մի ձայն՝ հանգիստ չեն տալիս Արտեմ Սուրմոնովիչին. նա չե կարողանում քնել՝ նստում դռակին, դարձյալ բաղինջներ ե վորոնում:

Գիշերը մոտենում ե իր վախճանին. ազոտ լույսը սկսում ե ներս թափանցել խուցի պատուհանից:

ԱՐՏԵՄ ՍՈՂՈՄՈՆՈՎԻԶ — (վտարի ե կանգնում գրեթե կիսամերկ, շապկանց) Վահ յես ինչ ե, Աստված իմ. դժոխք վոր ասում են, հալբաթ սա ե վոր կա, ես ինչ որն ընկա, խեղաժոււմ, շունչս կտրվում ե—այ եստեղից, կարծես, հոգիս դուրս ե գալիս (ծեռքով ցույց ե տալիս վոր խեղաժոււմ ե) մի թամաշա արա, 20 հոգի թափված իրար կողքին—սաղ ոթախը հոտ են դցել: Բա բաղլինջները, լուսները, բա մկները. բաս են անիծած ջրի ձենը, վոր քունս փախցրեց, հենց գիտենաս ջրի մեջ ձկներ են լողանում (մոտենում ե գարշոկին) Վահ ձեզ մատաղ, տես 2 մուկը ընկել են, վոնց են լող տալիս, այ քեզ բան. վանսա են ընդունում. սրանց աջալը հալբաթ եկել ե: Բաս իմ աջալը. միթե յես ել Արտեմ Սողոմոնովիչս մկան պես պիտի խեղաժոււմ, մեռնեմ այս բերդում. ոհ, անիծված որ գնաս ու ել յես չգաս (այդ միջոցին պառկած կալանավորներից մեկը վտտով զարկում ե քնի մեջ Արտեմ Սողոմոնովիչին) Վահ, վա, նալլաթ քեզ սատանան (պառկածներից մի ուրիշը տկլոր ինչպես լուսնոտի նստում ե յեվ տարորինակ «հում, հոխ» յեվ այլ այսպիսի ծայներ ե արծակում, Արտ. Սողոմոնովիչին սարսափահար անում) վայ, ոգնեցեք, գրգրվել ե ես մարդը (կարծեցյալ «գիժը» դարձյալ պառկում ե. մի ուրիշը կոշմարի մեջ սաստիկ թղավոց, ճիչ ե արծակում. Արտ. Սողոմոնովիչը դես դեն ե ընկնում յեվ ասհարեկված ծշում) ոգնեցեք, ամենքը գժվել են, բռնվելիս ու բերդը տանելիս հանկարծակի ցնդվել են, ոգնեցեք (մի կերպ ցատկում ե պառկածների վրայով յեվ մոտենալով դռանը ուժգին քարախում ե, կանչում) նադգլինատել, նադգլիրատել, ոգնեցեք (քնած կալանավորներից 3-4-ը աղմուկից զարթնում են յեվ հայտնաբեր թափում. «իշ գլուխ, ինչ ես հարայ հրոց գցել», «սրիկա» — «հաստափոր անասուն» յեվ այլն):

ՎԵՐԱԿԱՅՈՒ ՆԻԿԻՏԵՆԿՈ — (Փորտոչկան կիսով շափ քացելով) Ինչ կա, Ինչ աղմուկ ե:

ԱՐՏ. ՍՈՂ. — Ոգնեցեք, պարոն նադգլիրատել, գժվել են. ՎԵՐ. ՆԻԿԻՏԵՆԿՈ. — Ո՞վ ե գժվել:

ԱՐՏ. ՍՈՂ. — Այ, սրանք ամենքը, հախ Աստծու, գժվել են, ինձ կսպանեն:

ՎԵՐԱԿԱՅՈՒ ՆԻԿԻՏԵՆԿՈ. — Հանգիստ կացեք, դատարկ բան ե:

ԱՐՏ. ՍՈՂ. — Կսպանեն, կսպանեն ինձ, գողեր, տվագակներ են յերեվում:

ՎԵՐ. ՆԻԿ. — Դատարկ բան ե ասում եմ. դրանց այս առավոտ ձեզնից կբաժանենք (դռնակը փակում ե. Արտ. Սողոմոնովիչը վախվախելով դես դեն ե նայում զգուշությամբ յեվ լուլթյամբ. գնում ե դեպի իր տեղաշորը յեվ սկսում հագնել շորերը):

ԱՐՏ. ՍՈՂ. — (ինքն իրան, ցածր ձայնով) Յես Արտեմ Սողոմոնովիչս Մետեխի բերդում .. յես ով, ես գող ու ավագակներն ով. յես մի վաճառական մարդ, իմ առուտուրի, հալալ հաշիվների, հալալ ողուշաղի տեր, յես ինչ եմ արել, ում ինչ վնաս արել, վոր երեկ բերին, կոխեցին ես դժոխքի ծակը. բաս սա դատաստան ե, արդարութիւն ե, չե, աշխարհի վերջս եկել ե, վոր ինձ պես արդար, հալալ մարդուն գող ու ավագակների հետ բերզն են գցում: Ախ, իմ կնիկ պետլած Կատինկա ջան, իմ խելոք տղա Գիգոլի ջան, իմ սիրուն Շուշանս, յարաբ վոնցեք, իմ դարդուց հալբաթ դարբեգարբ եք ընկել, հալումաշ ընում. ախ, ախ ողորմած Աստված, դու ազատես ինձ ես խաթիցը, ես փորձանքից: (Դուրը շունգայից հանկարծ քացվում ե. մտնում են ըանտապետը, 2 ըանտային վերակացուներ, 4 զինվոր):

ՎԵՐԱԿԱՅՈՒ ՆԻԿԻՏԵՆԿՈ (հրամայական ձայնով քնած կալանավորներին) վեր կացեք, հայդե մարշ (իրարանցում պառկած կալանավորների մեջ) հավաքեցեք իսկույն ձեր իրերը, շուա, մի ախիթարթում (փնիթոց) առանց փընթ-

փնթօցի, մի համարձակվեք (փնթփնթօցը ավելի սաստկանում ե, դժկոհութունն):

ԲԱՆՏԱՊԵՏ.— Այստեղ կմնան միայն յերկուսը. Արտեմ Դորմագովը և Կարո Խաժամուժյանը (կալանավորները հավաքում են իրանց իրենքը յեվ կանգնում իրար կոխքին) դեհ, շարժվեցեք (զինվորների յեվ վերակացունների ուղեկցությամբ նրանք դուրս են գնում, քացի Արտ. Սորմոնովիչը յեվ ջահել փափախավոր՝ Կարո Խաժամուժյանը):

ԱՐՏ. ՍՈՒՍՈՆ.— Լավ ե տարան դժերին, գող ու ավագակներին, ոթախը խալվաթացավ:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄՈՒԺՅԱՆ.— (Փափախավոր կալանավոր, դիմելով Արտեմ Սորմոնովիչին) Դու ո՞վ ես, ի՞նչ մարդ ես.

ԱՐՏ. ՍՈՒՍՈՆՈՎԻՉ.— Յես Արտեմ Սորմոնովիչ Դորմագով, յերկրորդ գիլդի հայտնի կուպեց Բագազխանում. դու ո՞վ ես:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄՈՒԺՅԱՆ.— Յես հայտնի հեղափոխական գաշնակցական խմբապետ. Կարո Խաժամուժյան:

ԱՐՏ. ՍՈՒՍՈՆՈՎԻՉ.— Կարո ինչյան:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.— Խաժամուժյան, քար ես ինչ ե:

ԱՐՏ. ՍՈՒՍՈՆՈՎԻՉ.— Վա, Կարո Խաժամուժ ել առուն կըլի. ինչ բանի համար են քեզ բերդը գցել:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.— Յերևի թուրքեր սպանելու, բոմբ գցելու կամ դրամական պահանջներ անելու համար:

ԱՐՏ. ՍՈՒՍՈՆՈՎԻՉ.— Հա դաշնակցական, թուրքեր սպանելու և փողեր գժլելու համար:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄՈՒԺՅԱՆ.— (Հպարտությամբ) Այո այո, հայ ազգի ինքնապաշտպանության, փրկության համար:

ԱՐՏ. ՍՈՒՍՈՆՈՎԻՉ.— Ինձնից ել կնքած ահ ու զարգանդի նամակներով մի քանի անգամ հոգարներ են պուկել դաշնակցականները, չլինի թե դու ել նրանցից ես:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.— (Բարձրաձայն) Չհամարձակվեք, ամեն ինչ հայ ազգի փրկության համար:

ԱՐՏ. ՍՈՒՍՈՆՈՎԻՉ.— Թուրքեր սպանելով ու մեր փողերը զավթելով ազգ փրկել վճնց կարելի ե:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.— (Բռունցքը քարձրացնելով Արտ. Սուլչի վրա) Չայդ կարիք թե չե շանսատակ կանեմ.

ԱՐՏ. ՍՈՒ.— (Յետ յետ քաշվելով) Վահ, վահ, տո դուք բերդում ել կապելու գիժ եք...

ԿԱՐՈ ԽԱԺԱՄՈՒԺ.— Այո, այո, գիժ ենք, խելագար ենք, թուրք ու հայ դավաճաններին մենք հավասարապես վոչնչացնում ենք:

ԱՐՏ. ՍՈՒ.— (Մի կոճով ցածր) Այ քեզ ցնդված մարդ, վախենում եմ, ախպեր, ես թավուր կապելու գժերից...

ԿԱՐՈ ԽԱԺԱՄՈՒԺՅԱՆ.— (Փափախը գլխի մի կողմը գցելով յեվ բռունցքը քարձրացնելով Արտ. Սուլչի վրա՝ քրտազի մեջ).

«Տվեք, ավեք ինձ սուրեր սարեր կործանեմ,

Ծառը արմատով գետինեն հանեմ,

Սուր ահուհներովս յերկաթ կը ծամեմ,

Մեջս այդքան ույժ, առեք, ինչ անեմ.» (վերջին տողը ինքնամոռացության մեջ արտասանելիս՝ բռունցքը իջեցնում ե Արտ. Սորմոնովիչի կուան վրա):

ԱՐՏ. ՍՈՒՍՈՆ.— Վայ, վայ սպանեց, ոգնեցեք (աղմուկի վրա դուռը քացվում և, մտնում են վերակցու Նիկիտենկոն ու պարաշնիկ Սանդրոն սենյակը ավելելու համար շոտքը ձևալին):

ՎԵՐԱԿ. ՆԻԿԻՏԵՆԿՈ.— (Խստությամբ). Սա ինչ աղմուկ ե, ինչ խաբար ե. այստեղ ձեն, ծպտուն չպետք ե հանել:

ԱՐՏ. ՍՈՒՍՈՆՈՎԻՉ.— Այ սա ինչ վոր սարսաղ բաներ եր դուրս տալիս և բռունցքով թևս ջարդեց, կտրեց. սա ինձ կսպանի այստեղ.

ՎԵՐԱԿ. ՆԻԿԻՏԵՆԿՈ.— (Դեպի Կարոն) Չհամարձակվեք, թե չե... կարցեր կնստեք:

ԱՐՏ. ՍՈՒՍՈՆՈՎԻՉ.— (Կուչ գալով). Պարոն նազ-

վեք, թե չե... կարցեր կնստեք:

ԱՐՏ. ՍՈՒՍՈՆՈՎԻՉ.— (Կուչ գալով). Պարոն նազ-

վեք, թե չե... կարցեր կնստեք:

գիրատել, սուտ ե ասում, հենց ենպես, հանաք արեցի (վերապա նիկիտա դուրս ե գնում):

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—(Կամերայի հատակը անփույթ ու դանդաղ սրբելով). Ամա խալխ են բերում, հա բերում, բերդը լքցնում են. ասեղ գցելու տեղ չկա, կամերաները լիքն են, 10-15 հոգի յեն ամեն մեկում:

ԱՐՏ. ՍՈՂՈՄՈՆՈՎԻԶ.— Ինչի խաթեր են ետքան մարդ բռնոտում:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—Յես ինչ գիտեմ, վորին գաբաստովկի համար, վորին բոմբ գցելու, թուրք սպանելու կամ վորին ել «руки вверх» ասելու ու թալանելու համար:

ԱՐՏ. ՍՈՂՈՄՈՆՈՎԻԶ.—Բաս յես ինչ մեղք եմ արել, վոր ինձ ել բերդն են բերել-գցել:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—(Ժիծաղելով). Քեզ համար ել ասում են, վոր քո մաղաղի առաջ բոմբ են գցել ու դու ել խառն ես եզ բանում:

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.—(Սարսափած). Ի՞նչ. բոմբ... ինչ բեհեսաբ նամաղուլ ես անում. ել եզ խոսքը բերնիցդ չհանես ուրիշի մոտ:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄՈՒԺՅԱՆ.—Հաս, բոմբ ե գցել, այ աֆերիմ Արտեմ Սոլոմոնովիչ (ընդհանուր ծիծաղ):

ԱՐՏ. ՍՈՂՈՄՈՆՈՎԻԶ.—(Չայրույթով). Տո, ինձ մի գովացնեք է. եզ թավուր բան բերներեմեզ մի հանեք, ասում եմ:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—(Սենյակը մաքրելիս) Հախ Աստծու, սող բերդում հենց են են խոսում, վոր մի պառավ սովորազար, աղա մարդ բոմբխոս ե դառել:

ԱՐՏԵՄ ՍՈՂՈՄ.—(Իրան կորցնելով). Բաս դուք Աստված, խղճմասնք չունեք, եզ թավուր շաշ բաներ եք դուս տալիս գլխներեմեզ ու ինձ խելբահան անում. առ, յես ձեզ ինչ փաս եմ արել:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.—Ե՛հ, ինչ կա վո՞ր, բոմբ ես գցել, փառք ու պատիվ բեզ, Արտեմ Սոլոմոնովիչ:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—Ասում են, վոր բոմբը առաջ վելուց հետո, արտուուարի վրա միթոմ յերեք մարդ բաթմիշ են ելել ու 5 մարդ ել յարալու:

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.—(Գլխի մազերը փետելով). Վայ իմ գլխին, ինչ բաներ եմ իմանում, կորած եմ, կորած, վայ ինձ, վայ իմ խեղճ ողուշաղին:

ՎԵՐԱԿ. ՆԻԿԻՏԵՆԿՈ.—(Չայն ե տալիս). Սանդրո, դե, շուտ վերջացրու դուրս արի (պարաշնիկը շտապ դուրս ե գնում) Կարո Խաժամուժյան, ձեզ կանչում են կանցել-յարյան, համեցեք (Կարոն վերակացվի ուղեկցությամբ դուրս ե գնում. դուրը շննգալից փակվում ե):

ԱՐՏԵՄ ՍՈՂՈՄՈՆՈՎԻԶ.—(Մենակ հուսահատական դրության մեջ). Յես Արտեմ Սոլոմոնովիչս Մետեխի բերդում, ինչի՞ համար, ինչ սաբաբով, ասում են բոմբ գցելու համար. եզ թավուր ել սուտ կըլի. բա վո՞ր եզ սուտը դորթի տեղ անցնի ու ինձ անմեղիս, բերդում փթեցնեն, կատորժնի բաբոտ դրկեն կամ գուլով տան. ուուհու, ջանիս գողը բռնում ե, յես կմեռնեմ, կմեռնեմ, դրան չեմ գիմանա (ընկնում ե թուլացած տաքուրետի վրա, սրտնեղությունից արիալուխի կոճակները հանում ե, կուրծքը, յերեսը աղյուխով հովացնում):

ՎԵՐԱԿ. ՆԻԿԻՏԵՆԿՈ.—(Փորտոշկայից). Պարոն Դոմագով, պատրաստվեցեք, ժանդարմն ու լուսանկարիչն յեկել են ձեր նկարը հանելու համար:

ԱՐՏ. ՍՈՂՈՄՈՆՈՎԻԶ.—(Սարսափած, ինքն իրան) Ֆոտոգրաֆն ու ժանդարմը. ինչի համար, ումն ե պետք իմ փաթրեթս. չե ետեղ մի սեկրետ կա. յարաղան Աստված, դուն քոմազ արա ինձ, ազատի ինձ ես խաթից, ես բեբաղաութենից (պատրաստվում ե. արխալուղի վրա հագնում ե յերկար փեշերով պեղծակը, վերցնում ե գլխարկը):

ՎԵՐԱԿ. ՆԻԿԻՏԵՆԿՈ.—(Դուրը քացելով՝ ներս ե մտնում). Նու, պատրաստ եք, դե, դուրս յեկեք (Արտ. Սոլոմոնովիչը գլխարկը ծածկելով յեվ յերեսը խաշակնքելով դուրս ե գնում վերկացվի հետ):

Պ Ա Տ Կ Ե Ր Զ.

Բեռը ներկայացնում է բանտի մի բակը. այնտեղ են լուսանկարելը իր ապարատով և ժանդարմը. վերակացվի ուղեկցութեամբ հայտնվում է Արտեմ Սոլոմոնովիչը:

ԺԱՆԴԱՐՄ.—(Մոտենալով յեվ նայելով վտախց գլուխ Արտեմ Սոլոմոնովիչին). Նկարեք սրան Ձ անգամ և տարբեր դերքերով:

ԱՐՏԵՄ ՍՈԼՈՄՈՆ.—(Վախի զգացմունքից այլայլված, ցածր ձայնով). Ու՞մն է հարկավոր իմ փարթրեթը, ո՞ւմն էին էմ արել:

ԺԱՆԴԱՐՄ.—Բոմբիստի նկարը ուղարկվում է ամենքին և ամեն տեղ, ում և ուր հարկն է. կառավարչապետին, մինիստրին, Նորին Կայսերական Մեծութեան:

ԱՐՏԵՄ ՍՈԼՈՄՈՆ.—(Տեղն ու տեղը հայրումն է). Վա, վա, ինչ էք հրամայում, յես, յես, բոմբիստ. փաթրեթս վարանցով Դաշկովին. Մինիստրին, Թագավորին. չե յես վոր բոմբիստ եմ, հալբաթ աշխարհի վերջն յեկել ե...

ԼՈՒՍԱՆԿԱՐԻԶ.—(Ապարատը շտկելուց հետո՝ մոտենում է Արտեմ Սոլոմոնովիչին, գլուխը ուղղում է, ցույց տալով թե ինչպես պետք է պահել). Կանգնեցեք այսպես ուղիղ առանց գլխարկի, նայեցեք այս կողմը (ցույց է տալիս մի կետի վրա ապարատի ուղղութեամբ). հանգիստ, չշարժվեք (Արտեմ Սոլոմոնովիչը ապուշի պես աչքերը շոնել է, ահ ու սարսափից դեմքն այլայլվել է). դեմքդ մի ծամածուր, ինչ էս աչքերդ շոնել. (այդ խոսքերը շոն ազդում Արտ. Սոլ-չի վրա):

ԺԱՆԴԱՐՄ.—(Խրոխտաբար). Քեզ ասում են ծամածուրթյուններ չանել, խելագար էս ինչ է (Արտ. Սոլ. անփոփոխ արձանացած կանգնած է):

ԼՈՒՍԱՆԿԱՐԻԶ.—Վոչինչ չի ոգնի, անհուսալի է. ճարչկա, այդ դրութեան մեջ պետք է նկարել. (նկարում է. 1-2 րոպե ապարատի գործով զբաղվելուց հետո). հիմա կանգնեցեք կողքանց, պրոֆիլով (լուսանկարիչը վերակացվի ոգնութեամբ շարժում է Արտ. Սոլոմոնովիչին յեվ կանգնանեցնում է այնպես, վոր դեմքի մի կողմը (պրոֆիլը) նկարվի):

ԼՈՒՍԱՆԿԱՐԻԶ.—(Նկարում է). Վերջացավ. (մի րոպեյից հետո). հիմա գլխարկդ ծածկիր, կանգնիր ուղիղ (Արտ. Սոլ. անշարժ է, ժանդարմը յեվ վերակացուն շարժում են գրեթե անզգայացած Արտ. Սոլ-չին):

ԺԱՆԴԱՐՄ.—(Բարկուժյամբ). Ուղղակի եշ է կտրրվել. ձեծով ու բզով միայն կարելի է սրան շարժել: Կասկած չկա, վոր նկարները իսկի նման չեն դուրս գա:

ՎԵՐԱԿ ՆԻԿԻՏԵՆԿՈ.—(Ժիծաղելով). Մարսափահար է յեղել, լեզուն փորն է ընկել:

ԺԱՆԴԱՐՄ.—Յերբ մտրակի հարվածներ կստանա, այն ժամանակ լեզուն կբացվի:

ԼՈՒՍԱՆԿԱՐԻԶ.—Ուրիշ յեւք չկա. ինչպես այլակերպված է, նկարներն ել այլակերպ դուրս կգան (նկարում է): Շուտ արի այժմ մի կողքի, պրոֆիլդ դեպի ապարատ. (Արտ. Սոլ. մտում է միշտ անշարժ. ըննի պտույտ են ասում նրան ինչպես հոլը յեվ վերջը կողքի կանգնեցնում):

ԼՈՒՍԱՆԿԱՐԻԶ.—(Նկարում է). Դեհ վերջացավ, է հարկե, վատ և անհաջող. թերևս նկարները անպետք լինեն:

ԺԱՆԴԱՐՄ.—(Սպառնական տոնով). Անպետք կլինեն, տաս անգամ կնկարենք, մինչև վոր մեկը նրանցից նման կլինի: Տարեք այս հայվանին իր կամերան:

(Արտեմ Սոլոմոնովիչը, վորի թեմից ընծառ ունի վերակացուն, հազիվ քայլերը շարժելով լնգնազալն գնում է ուր վոր տանում են):

Բանախ շենքի սենյակներինց մեկը, վորտեղ բանտային բժիշկը կալանավորներին մանրամաս քննության ե յենթարկում, չափում հասակը, մարմնի այս կամ այն նշանը կամ թերությունը նշանակում և այլն: Սենյակը գրեթե դատարկ ե. կա մի գրասենյան, յերկու աթոռ և մի գործիք հասակը չափելու համար:

Վոչ վոք չկա: Վերակացու Նիկիտենկոն բերում ե այդտեղ Արտեմ Սոլովյովին:

ՎԵՐԱԿԱՑՈՒ ՆԻԿԻՏԵՆԿՈ. — (Դուռը քանալով՝ նայում ե շուրջը). Բժիշկը դեռ այստեղ չե. սպասեցեք փոքր ինչ, յերևի շուտով կգա (դուրս ե գնում):

ԱՐՏԵՄ ՍՈՒՍՈՒՆ. — (Այս անգամ ուշքի ե յեկել. յերեվում ե շատ ավելի զգաստ ու կայուն քան յերևկ նկարելիս). Ես թավուր ել ոյին կլինի. ես հանգի ել մասխարություն. յերեկ փարթրեթս քաշեցին, չարչրեցին, ետոր ել բժիշկը պետք ե չափ ու ձև անե, քննե մարմինս (խորը մտածելով). չեե. հիմի վառավուրդ եմ անում, վոր եստեղ մի բան կա. հալբաթ դորթ վոր մենձ ու ծանր մեղավոր եմ: համարում ինձ, վոր եսենց ծեբոյի պես կպել եմ ջանիս. ախր յես իմ շվաքից վախեցող մի մարդ, հաջն ինչ ե, հավ չեմ մորթել իմ կյանքում. ու ասում եմ, վոր մարդիկ ես կոտորել: Սա փեքը անելու բան ե: Ու՞ր ե, Աստված, արդար դատաստանդ. բաս վոր դու մարդ եյիր ստեղծում, փեքը չարբը, վոր արդար դատաստան ել ստեղծես նրա հետ: Մեղա քեզ, Աստված. մեղա (մտնում ե բժիշկը, Արտ. Սոլովյովելը 2 ձեռքը փորին դրած՝ խոնարհաբար գլուխ ե աայիս):

ԲԺԻՇԿ. — (Թղթեր ե դարսում սեղանի վրա. մոտենալով Արտեմ Սոլովյովին, սառնությամբ). Շորերդ հանիր բոլորովին:

99-45145

3866



ԱՐՏ. ՍՈՒՍՈՒՄ. — Վոնց թե բոլորովին. ցափ տկլոր: **ԲԺԻՇԿ.** — Այս.

ԱՐՏ. ՍՈՒ. — Ախր, բժիշկ ջան...

ԲԺԻՇԿ. — Առանց այլեայլության, հանեք բոլոր շորերը:

ԱՐՏ. ՍՈՒ. — Ախր բժիշկ ջան, ինչի համար ե...

ԲԺԻՇԿ. — Վոնց թե ինչի համար. քննելու համար:

ԱՐՏ. ՍՈՒ. — Ախր յես հիվանդ չեմ:

ԲԺԻՇԿ. — Դու քաղաքական հանցավոր ես. միշտ քննության եմ յենթարկում բանտարկյալներին. դե, շուտ: (Արտ. Սոլովյովելը սկսում ե ակամա շորերը հանել. հանում ե միայն վերին հագուստը, շապիկը յեվ կանգնում):

ԱՐՏ. ՍՈՒ. — Ահա, բժիշկ ջան:

ԲԺԻՇԿ. — (Մտառությամբ). Քեզ ասացի վոր բոլորովին տկլորվել. հանեք կոշիկներն ել, շալվարն ել:

ԱՐՏ. ՍՈՒ. — (Սքանեղությամբ). Բա շալվարս ել վոնց հանեմ (հանում ե կոշիկներն ու շալվարը. կանգնում ե փոխանով):

ԲԺԻՇԿ. — (Բարկանալով). Բաս դու ելի չհասկացաք, վոր բոլորովին պիտի տկլորանաս:

ԱՐՏ. ՍՈՒ. — Բա, բժիշկ, փոխանս ել պիտի հանեմ:

ԲԺԻՇԿ. — Հա, փոխանդ ել պետք ե հանես:

ԱՐՏ. ՍՈՒ. — Ախր, ամոթ ե.

ԲԺԻՇԿ. — Հա, ամոթ ե, ամոթ ե. բոմբ դցելը ամոթ չե, փոխան հանելն ե ամոթ...

ԱՐՏ. ՍՈՒ. — Ի՞նչ եք հրամայում, բժիշկ ջան. դուք ել եմ եք ասում, ինչ վոր ուրիշները. լամիս պարալիչ բնկնեմ եզ խոսքիցը:

ԲԺԻՇԿ. — Արա, ինչ վոր ասում եմ քեզ և ուրիշ վոչինչ:

ԱՐՏ. ՍՈՒ. — Ախր, ասի, ամոթ ե:

ԲԺԻՇԿ. — Ամաչում ես, աղուխ չունես, աղուխով ծածկվիր:

ԱՐՏ. ՍՈՒ. — (Արխալուղի ջեբից աղուխը հանում ե. փոխանը հանելիս). Տեր-Աստված, Տեր-Աստված, սա ա-

բարմունք է. խալին ինչ կասեն, վոր իմանան կամ տեսնեն (մեջքը հասարակութեան կողմը դարձրած մի կերպ աղյուխով ծածկում ե իր մերկ մարմինը, շտկում ե շարունակ կապած աղյուխը յեվ հետո հանած փոխանն ե սկսում վրան կապել). անտեր մի փեշթամալ ել չկա, վոր որինավոր կապեմ. (դառնում ե դեպի բժիշկը). անա, ինչ եք հրամայում:

ԲԺԻՇԿ.—(Յույց ե տալիս հասակը չափելու ապագա քանակը). Կանգնիր անա ետեղ (Արտ. Սոլ-չո մանկկեն դարձած՝ հնազանդվում ե բժիշկի ցուցմունքներին. բժիշկը հասակը չափելուց հետո նշանակում ե թղթի վրա). գլուխը ցույց տուր, տեսնեմ (չափում ե զանգը, ճակատը) աբա քինթդ շանց տուր:

ԱՐՏ. ՍՈՒ.—Թամամ գարմանք ե. գլուխը ելի, հա, ամեն բան գլխից ե դուրս գալի. քինթս ինչ մեղք ունի. յերեկվանից սուրբո եմ ընկել փարթրեթս հանելու ժամանակ:

ԲԺԻՇԿ.—(Բարկացում). Ուրեմն ամբողջ որ պետք ե կորցնել ձեր պատճառով:

ԱՐՏ. ՍՈՒ.—(Ընթից բռնելով). Լավ, լավ, բժիշկ ջան, մի նեղանա:

ԲԺԻՇԿ.—(Բիծի յերկարութունը չափելիս, Արտ. Սոլ-չը 2-3 անգամ խիստ փոշտում ե). Թու, քինթդ սրբեր, պրծի:

ԱՐՏ. ՍՈՒ.—(Ելի փոշտում ե). Բաս վոր ասում եյի սուրբո եմ ընկել, աղուխ չունեմ, ինչով սրբեմ, մի աղուխ ունեյի, են ել բանդ արեցի (վորոնում ե մի քան, վորով քեծը սրբի. վերջապես փոխանի ծայրով մի կերպ սրբում ե):

ԲԺԻՇԿ.—(Բիծը չափելուց յեվ թղթի վրա նշանակելուց հետո). Աչքերդ ինչ ունդի ե, ցույց տուր, տեսնեմ:

ԱՐՏ. ՍՈՒ.—Ահա, տեսեք, ծնվելու որիցս միշտ սիպտակ ու կապուտ ե ելել:

ԲԺԻՇԿ.— Բաց արա բերանդ, ալուքներդ, լեզուդ ցույց տուր:

ԱՐՏ. ՍՈՒ.—Ահա, (բաց ե անում՝ քերանը). անա (ահագին լեզուն հանում ե. բժիշկը քալորը նշանակում ե թղթի վրա):

ԲԺԻՇԿ.— Չեոներդ ձգիր, տեսնեմ (ձգում ե). մեկ վոտը բարձրացրու (բարձրացնում ե) հիմի ել մյուսը (բարձրացնում ե). շուռ արի, մեջքդ դեպի ինձ (շուռ ե գալիս. բժիշկը նայում ե մարմնի զանազան մասերին, վորոնելով առանձին նշան կամ թերութուն). ցավ, յարա չէս ունեցել մարմնիդ վրա:

ԱՐՏ. ՍՈՒ.— Շատ ժամանակ առաջ վոտիս ձին քացի տվեց, հետո լավացավ (նայում ե բժիշկը վոտին):

ԲԺԻՇԿ.— Ել ուրիշ վոչքնչ:

ԱՐՏ. ՍՈՒ.— Մեկ ել են, վոր աճուկիս մոտ յերեխութենիս ժամանակ ուռավ, հասավ ու բլավ. հիմի տեղն յերևում ե:

ԲԺԻՇԿ.— Աբա, ցույց տուր:

ԱՐՏ. ՍՈՒ. Վոնց շանց տամ, ամոթ ե, բժիշկ:

ԲԺԻՇԿ.— Լավ. ուրիշ ել հիվանդութուն չունես:

ԱՐՏ. ՍՈՒ.— Ինչպես չե.

ԲԺԻՇԿ.— Ի՞նչ.

ԱՐՏ. ՍՈՒ.— Բուստիլ ունեմ. վախտ վախտ նստելու ժամանակ շատ ե նեղացնում (բժիշկը արձանագրում ե):

ԲԺԻՇԿ.— Հազեք շորերը:

ԱՐՏ. ՍՈՒՈՄ.— (Շորերը սկսում ե հագնել. մեծ զգուշութեամբ յեվ ամոթխածութեամբ հագնում ե նախ փոխա. նը. դառնալով բժիշկին). Ամա, բժիշկ ջան, ինձ արխեյնացրու, քեզ մատաղ, մի ասա թե սա ինչ բան ե. երեկ փաթրեթս հանեցին, ասին, վոր պիտի դրկեն Վարանցով-Դաշկովին, մինիսարին, թագավորին. լաավ. բա ես գլուխս, քինթս ու բերանս, ձեռք ու վոտքս, բոյ ու բուսաթս չափելը ինչի համար եր...

ԲԺԻՇԿ. — (Բարկոլթյամբ). Ժամանակ չունեմ քեզ
եստեղ լեկցյաներ կարդալու. շուտ հագիր ու պրծիր:

ԱՐՏ. ՍՈՒ. — Մի ասա, բժիշկ ջան, մե լավություն
արա, ինչ կլինի:

ԲԺԻՇԿ. — Քաղաքականների հետ արգելված է խոսք
ու գրույց ունենալ:

ԱՐՏ. ՍՈՒ. — Քեզ մատաղ մի բան էլ ա ասա:

ԲԺԻՇԿ. — (Չարությամբ). Ձեռքդ չափեցի, վոր իմա-
նան ինչ յերկարություն ունենալով՝ ինչ ուժով ես բոմբը
զցել:

ԱՐՏ. ՍՈՒ. — (Սարսափած). Ելի բոմբ զցելու համար-
լավ. գլխիս, լեզվիս, քնթիս մենձությունն ու յերկարու-
թյունն իմանալն ինչ հարկավոր է մինիստրին, թագավորին:

ԲԺԻՇԿ. — (Կակղելով ու ակամա ծիծաղելով). Եդ բո-
լորը չափում ենք, անտղում ենք, նշանները գրում ենք
նրա համար, վոր բալքամ, ով գիտի, փախչես բերդիցը,
կարողանան եդ չափերով ու նշաններով հեշտությամբ
գտնել քեզ. իմացան հիմի:

ԱՐՏ. ՍՈՒ. — Հիմի հասկացա. հիմի հասկացա. վայ իմ
նաչար գլխիս (կոխում է գլխին). յես բոմբիստ, յես Ար-
տեմ Սոլոմոնովիչս նամուսով, դայրաթով մարդ (ղիմելով
ըժշկին): Բաս սրան մի ճար չկա, ոգնություն չկա ելի...

ԲԺԻՇԿ. — (Անհամբեր գլխարկը վերցնելով յնվ ըստ-
ծրածայն կանչելով). Վերակացու (մտնում է). տարեք
սրան, ինձ չափից դուրս ձանձրացրեց և համբերություն-
նից հանեց (շտապ թղթերը վերցնելով դուրս է գնում):

ՎԵՐԱԿԱՅՈՒՆ ԵՒ ԿԻՍԵՆԿՈ. — (Կոպտությամբ). Գնանք.
ելի յերեկվա ոյինները հանեցիր:

ԱՐՏ. ՍՈՒ. — Վայ քեզ Արտեմ Սոլոմոնովիչ, վայ քեզ,
գելերի ճանկն ես ընկել... (գնում է վերակացվի յետևեց):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐ 1.

Բանտի նույն կամերան, ինչ վոր առաջին գործողության մեջ:
Կարո Խաժամուժյանը պառկած՝ քնած է. Արտեմ Սոլոմոնովիչը
նստած տաբուրետի վրա՝ հուսահատական, անհանգիստ շարժում-
ներ է անում:

ԱՐՏԵՄ ՍՈՒՂՈՄՈՆՈՎԻՉ. — (հանկարծ վրտի է կանգ-
նում) Ախր, եսենց բան չիլինի, եսա յերեք շաբաթ բեր-
դում, վոչ դես կա, վոչ դեն, ենա տանջվում ես, հա շա-
րունակ տանջվում գժոխքում. ինչի՞ համար. գողություն
չեմ արել, մարդ չեմ սպանել, են է վկա է Աստված:
Ամենքը ճանաչում են ինձ՝ ով եմ, ինչ մարդ եմ, փողի
հաշիվ տեսնող, փող աշխատող, սովազար, անշար, ան-
փրաս մի մարդ:

ԿԱՐՈ ԽԱՉԱՄՈՒԺՅԱՆ. — (ընի մեջ) «Բռնեք, սպանեք,
գլուխը կտրեք, ջան տղերք, շուտ հասեք, հա եղպես, ջան
տղերք»:

ԱՐՏ. ՍՈՒՂՈՄ. — (սարսափահար, մոտենալով Կարոյին)
Վահ, Կարո, ո՞ւմ գլուխը կտրել, ինչեր ես ասում, քնի մեջ
էս թե զարթուն:

ԿԱՐՈ ԽԱՉԱՄՈՒԺՅԱՆ. — (զարթնում է վայրենի ձայ-
ներ արձակելով ու կոպիտ հորանջելով). Ոհ, ինչ յերազ-
ներ տեսա, տեսա, վոր հանկարծ թուրքերը վրատալով
կոտորում էին հայերին, արյունս գլուխս ընկավ, հավար
կանչեցի տղաներին:

ԱՐՏ. ՍՈՒՂՈՄ. — Հա, եսենց գոռացիր, վոր շատ վա-
խեցա. մեկ էլ «սպանեք, գլուխը կտրեք» խոսքերն էիր
ասում քնի մեջ:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄՈՒԺՅԱՆ — (հանկարծ վեր ե թուշում յեվ իրան հեշոս ձեվացնելով խոսում ե հափշտակությամբ) Հա սպանեք, կոտորեցեք, գլուխը կարեք թուրքերին. քնի մեջ թե արթուն մենք այդպես ենք դաշնակցական մաու- գերխտոներս (մոտենալով Արտ. Սոլումնովիչին):

ԱՐՏ. ՍՈԼՈՄ. — Տո, հեր ոխնած, ելի սկսեցիր, դինջ կաց, բերդումն ես, խոմ մեյդանում չես:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄՈՒԺՅԱՆ. — (ստանձին շեշտով) Այո, դուրսը թե բերդում, դիփ մեկ ե մեզ համար. մաուզեր, ուումբ, կոտորած մեր բոլոր թշնամիներին, դավաճան- ներին:

ՎԵՐԵԿԱՅՈՒ ՆԻԿԻՏԵՆԿՈ. — (Փարտոզկան քաց ե ա- նում յեվ ձայն ե տալիս) Կարո Խաժամուժյան, պարա- ստվեցեք, կանչում են ձեզ կանցելյարյա (Կարոն անհան- գիստ շտապ հագնում ե շորերն ու գլխարկը. դուրը քաց- վում ե. Կարոն վերահացվի նշանով դուրս ե գնում. դու- ոը կիսով շափ քաց ե մնում. հայտնվում ե պարաշնիկ Սանդրոն):

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ. — Արտեմ աղա, ահա քեզ մի նամակ ընտանիքից:

ԱՐՏ. ՍՈԼՈՄՈՆ. — (ուրախացած) Նամակ, կնկանիցս, Կատինկիցս. վահ, սա ինչ ուրախություն ե. շնորհակալ եմ. (նամակը պահում ե ձեռքում). Սանդրո ջան, ինձ լավ դուլուղ արա ես դժոխքում, իմացած կաց, վոր բախշիչ ինչքան կուզես չեմ խնայի:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ. — Աչքիս վրա, Արտեմ աղա, ինչ կհամայեք կկատարեմ.

ԱՐՏԵՄ ՍՈԼՈՄՈՆ. — Սանդրո ջան, տեսնում ես (ցույց ե տալին գոտին, վոր թուլացել ե) ես քանի որս վոնց եմ լղարել ես դժոխքում, լավ ուտելուն խմելուն սովոր՝ եստեղ մեռնում եմ սովից ու ծարավից. 3 շաբաթ ե գինու յերես չեմ տեսել. քո հոգուն մեռնեմ, Սանդրո ջան, վոնց վոր ըլի, շիրաչխանեն մոտիկ ե, սի թունգի

կարմիր գինի բերել տուր, ինչ ծախս կնստի, կնստի, քեզ ել լավ բախշիչ կտամ:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ. — Ինչի՞ չե, դրանից ել հեշտ ինչ կա, մյայն թե փող ըլի, փող. փողով բերդի նաչալ- նիկի աչքն ել կարելի ե կապել:

ԱՐՏԵՄ ՍՈԼ. — Փող... ինչքան կուզես (արխալուղի յետեվի գաղանի զրպանից հանում ե փողը): Ահա քեզ հինգ մանեթ:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ. — Մենակ գինի՞:

ԱՐՏԵՄ ՍՈԼՈՄ. — Այ, թե լավ դոշ ըլի, խիզիլալա, թուշի պանիր ու սպիտակ լավաշ, վոր Զվարիս Մամի հաց ել բերել տաս, լավ կըլի:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ. — Եղ ամեն բանը հեշտ ե. բեր- դում մենք մեր մարդիկն ունենք. վերակացուներն ել ոգ- նում են մեզ. եզ բանից նրանք ել ոգուտ ունեն.

ԱՐՏ. ՍՈԼ. — Այ, բաշըղադյոնում, Սանդրո ջան, ար- խեյին կաց, քո լավութենի տակը չեմ ֆիա (Սանդրոն դուրս ե գնում.) տեսնեմ ինչ ե դրում Կատինկես (ծրարը պատ- ոում ե յեվ դանդաղ, կցկտուր կարդում)

ՍԻՐԵԼԻ ԱՐՏՈՒՇ ԶԱՆ, ՀՈԳԻ ԶԱՆ,

Ես ինչ եկավ մեր գլուխը, ես ինչ կրակի մեջ ըն- կանք. յարաբ սա գալու բան եր, վոր յեկավ մեր գլուխը: Արտուշ ջան, հոգի ջան, ազիզ ջան, (Արտ. Սոլ. «այ, քո հոգուն մեռնեմ, Կատինկա ջան»). դուն գնացիր ու մեր տունը խափարվեց, սուզ ու լացն ընկավ մեր ջանը (Արտ. Սոլումնովիչը հուզված՝ վողրի տարորինակ ձայներ ե հա- նում): Շուշանը, քո սիրելի Շուշանը «վայ իմ պապաս, վայ իմ պապաս» ե կանչում շարունակ ու հեկեկում (լացը խեղտում ե, դժվարանում ե կարդալ):

Գիգոլին խոմ գժի հանգի ե դառել: Գիշեր ցերեկ քուն չունեմ, արտասուներս ինձ խեղտում ե, փիքն ու դարդը

ինձ տարել ե. յարար ինչ պիտի լինի քո ճարը, մեր ոջա-
խի ճարը, յեթե քո գլխին մի բան գա:

Ախ, ախ, սիրելի Արտուշ ջան, մի բան գրե, մի խա-
բար արա, մի ձենդ իմանամ, ջահաննամը մեր ամենքիս
գլուխը, մյայն թե դու վողջ առողջ, սաղսալամաթ լինես.
Ո, մեկ ել քեզ տեսնեմ, եզ որը ինձ համար վոսկե պսա-
կի որ կլինի. մի իքմին գրե, գրե մյայն շուտով:

Քեզ հավիտյանս հավիտենից սիրող
քո Կատյուշկա.

Ահ, քո հոգուն մեռնեմ, Կատյուշկա ջան, ես ինչ բա-
նեք ես գրում. ախ, ես ինչ եկավ իմ գլուխը, ուղղուշաղիս
գլուխը. (վողջում ե) ի՞նչ գրեմ, ի՞նչ պատասխան տամ
(մտահոգ). վոր դիփ դրուստը գրեմ, ասեմ վոր ինչ դժոխ-
քումն եմ, ինչ բանի մեջ են մեղադրում, փաթրեթի ու
չտփ ու ձևի խտորիեն գրեմ շատ կու վախենան, լավ ե
սիրտ տամ, արխեյնացնեմ (նստում ե յեվ գրում, հետո
կարդում ե իր գրածը շատ ծանր, կմկմալով)

«Իմ թանգագին, անթառամ, պետլած Կատյուշկա ջան,
անուշ ջան,

Ստացա քո գրած նամակը. անհաշիվ ուրախացա.
քո գրածից ենպես ե երեվում, վոր շատ եք փիքը
անում, տանջվում ինձ համար: Իմ անուշ ջան, իմ սրտի
կտոր Կատյուշկա ջան, շատ մի տանջեք ձեզ, ամեն բան
լավ կլին. յես եստեղ լավ եմ, սաղսալամաթ. ինձ լավեն
պահում, վոնց վոր սովորագար, աղա մարդու: Ասում են,
վոր շուտով ինձ կազատեն, վոր վոչինչ ենենց ծանր մեղ-
քի համար չե, վոր բերել են ինձ եստեղ. հասարակ կաս-
կած կա, ուրիշ վոչինչ: Շուտով կազատվեմ ու կուզամ,
քո շինքը կնկնեմ, կպաշպչեմ քեզ ու երեխանցը: Կա-
տյուշկա ջան, անուշ ջան. ելի առաջվա պես բախտավոր
կլինենք, մի լաց լինեք՝ մի փիքը անեք. Աստված ողոր-
մած ե, արդարը, անմեղը կմնան արգար ու անմեղ, անար-
դարը ու մեղավորը կպատժվեն. ետենց ե Աստծու դար-

սողությունը ու դատաստանը: Արխեյն կացեք, իմ ումու-
ղը Աստծու վրա ե:

Մնամ, Անուշ ջան, Կատյուշկա ջան, քեզ անհե-
սաբ սիրող Արտեմ Սուլումանովիչ»:

(Նամակը դնում ե ծրարի մեջ. մի ըոպե անց՝ վերա-
կացուն դուռը բացում ե, ներս ե մտնում Կարոն. դուռը
դարձյալ փակվում ե:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄՈՒԺՅԱՆ.—Արտեմ Սուլումանովիչ, ինչ-
պես յերևում ե իմ բանս բուրդ ե. ծանր հանցանքներ են
բարդում վրաս, մի քանի թղթեր ստորագրել տվին: Շատ
կարելի ե ինձ եստեղից տեղափոխեն ուրիշ տեղ: Բայց
վոչինչ, մենք պատրաստ ենք ամեն զոհողության մեր
«սուրբ գործի» համար (հափշտակուծյան մեջ.) ով ազգ,
հայ ազգ, քեզ համար ամեն բան ու ամեն ինչ. (վո-
գեվորդած լերզում ե)

«Ամենայն տեղ մահը մի ե,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց յերանի, վոր իր ազգի
Ազատության կզոհվի»:

(Մոտենում ե Արտ. Սուլումանովիչին յեվ ուժգին թա-
փահարում ե թեվը) Հայ բուրժուա, հայ հարուստ վաշխա-
ուու, զոհիր կյանքդ ազգիդ, բաց արա քսակդ, թե չե շան
պես կսատկացնեմ:

ԱՐՏ. ՍՈՒՂՄՈՒՆՈՎԻՉ.—Թող, ախպեր, կուուս ցավա-
ցրիր, կապելու գիժ ես, ինչ ես:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄՈՒԺ.—(Ելի: թեվից ընկում ե) Բաս ասա,
Արտեմ աղա, հայ ազաներից խեր չպիտի ունենա հայ ազ-
գը, ասա, ասա շուտով թե չե...

ԱՐՏ. ՍՈՒՂՄՈՒՆՈՎԻՉ.—Թող ասում եմ, թարգը տուր
զժութենիդ:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.—Հա գժվել եմ, գժվել. տուր
փոզերդ թե չե ես սահաթին Աբրահամի մոտ կուզարկեմ

քեզ. միևնույն է, ինձ կամ պիտի գնդակահարեն կամ մըշտական կատորգայի դատապարտեն:

ՍՐՏ. ՍՈՂՈՄ.—(սարսափած) Թող թե չե կգոռամ, նազգիրատելին կրկանչեմ:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄՈՒԺ.—Մինչև նազգիրատելը կգա, դու հոգիդ կփչես, անիրավ. տուր փողերդ:

ՍՐՏ. ՍՈՂՈՄ.—Կավ, լավ. շատ չունեմ. մի քանի մանեթ մյայն և վոչ ավելի (Արխա ուրի յիտեվի զրպանից հանում ե փող) առ քեզ, ինձ հանգիստ թող:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.—(Չեղբից անում ե) Ես ել վոր պուկեցի հայ վաշխառուից, սա ել մեծ բան է: (Դուռը թխկացնում ե մի քանի անգամ):

ՎԵՐԱԿԱՅՈՒ ՆԻԿԻՏԵՆԿՈ.—Ով է, ինչ էք ուզում

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.—До беру.

ՎԵՐԱԿ. ՆԻԿԻՏ.—Ուրիշ մարդ կա. մի քիչ սպասիր:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.—Հիվանդ եմ, սպասել չեմ կարող (մի ընդեղից հետո կրկին թխկացնում ե. վերակացումն դուռը քացում ե, դուրս ե թողնում կարյան. մանում ե պարաշնիկ Սանդրոն):

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—(Թղթերի մեջ փաթած մթերքները դնում ե սեղանի վրա). Ահա քեզ, Արտ. աղա, զակուսկեղենը (արեստանտի կուրտկի տակից հանում ե գինով լիքը ծեստի ածանը) ահա և Կախեթի կարմիր գինի:

ՍՐՏ. ՍՈՂՈՄ.—Ոհ, քո հոգուն մեռնեմ, Սանդրո ջան (գինով ամանը ընթանն ե դնում յեվ քավականաշափ կոն ծելուց հետո թազնում ե սեղանի յետեվը անկյունում). այ, լավ բան, Սանդրո ջան. մի քեզ տեսնեմ բերդից դուրս—քաղաքում ազատ, տես թե ինչ լավություն կանեմ քեզ:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—Արխային կաց, Արտեմ աղա, վերջը լավ կլի, մի որ կհանդիպենք դուռը. ինչ վոր ելի հրամայես, յես պատրաստ եմ, միշտ քեզ դուրսդ:

ՍՐՏ. ՍՈՂՈՄ.—Այ. ապրես, Սանդրո ջան, ապրես (Սանդրոն դուրս ե գնում. Կարոն վերադառնում ե. վերակացուն դուռը փակում ե):

ԿԱՐՈ ԽԱԺԱՄՈՒԺ.—Հա, Արտեմ Սոլոմոնովիչ, քեֆդ լավ ե յերևում, դամազդ տեղը. ի՞նչ ե պատահել, ինձնից ել չես վախենում:

ՍՐՏ ՍՈՂՈՄ.—Ձե. գինին ինձ սիրա ե տվել. հա, դամազս տեղն ե:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.—Ի՞նչ գինի:

ՍՐՏ. ՍՈՂ.—Գինի բաս. գինի բերին շիրաշխանից. զակուսկեղեն ել հետը:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.—Վա, գինի, ուր ե, բեր կոնծենք, քեֆ անենք:

ՍՐՏ. ՍՈՂՈՄ.—Բա ինձ ել չես վախեցնի. ել բեղամազ չես անի:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.—Ձե, չե, յերդվում եմ «տուրք գործի» անունով. մյայն գինի լինի, քեֆ լինի:

ՍՐՏ. ՍՈՂՈՄ.—(Չակումկեղենը դարսում ե սեղանի վրա, գինով զավածն ել զգուշությամբ հանում ե սեղանի յետեվի անկյունից). Այ, քեզ լավաշ, Ջվարիս Մամի սիպտակ հաց, այ քեզ թուշի պանիր, խիզիլալա, թազա դոշ, ահա քեզ և Կախեթի կարմիր գինի:

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.—Վա, ես ինչ խաբար ե. բերդում ես թավուր զակուսկեղեն ու գինի. դե, Արտեմ Սոլոմոնովիչ, համեցեք, նստիր, ծարափներս կտրենք. (նստում են սեղանի շուրջը):

ՍՐՏ. ՍՈՂՈՄ.—(Գավաթից գինին ածում ե թեյի քաժակների մեջ) Աբա, Կարո, անուշ արա, խմիր (Կարոն մի անգամից կուլ ե տալիս լի քաժակը. Արտեմ Սոլոմոնովիչը անում ե նույնը):

ԿԱՐՈ ԽԱԺԱՄ.—Ոխայ, ինչ գինի ե ե. բաս ես զակուսկեղենը, զրուսա վոր ջոկովի ե (Արտ. Սոլ-ը յեվ

Կարոն ազահարար ուտում են զակուակեղենը յեւ միա-
ժամանակ զինի կոնծում):

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.— (Արդեն լավ քեֆի ե). Բաս, Կարո
ջան, փողն ինչ ասես անում ե. փողով ում աչքը չի կա-
րելի կապել, փողով թեկուզ հենց թագավորին կարելի ե
կաշառել:

ԿԱՐՈ ԽԱԺՍՄ.— (Անդադար ուտում ե). Շատ դրուստ
ե, Արտեմ Սոլոմոնովիչ, մեր հայ ազգը վոր կա, հարուստ-
ների փողով ե ապրում, հարուստների շնորհիվ ե, վոր
անուն ե հանել և կյանք ունի այսօր. մենք դաշնակցա-
կաններս այդ լավ ենք հասկանում. դրա համար ել մենք
միշտ աշխատում ենք միություն պահպանել մեր կուսակ-
ցության և հայ ազգասեր փողատերերի, հարուստների մեջ.
Կեցցե հայ ազգը և հայ հարուստները:

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.— Այ, ապրես, Կարո ջան, եզ լավ ա-
սացիր. առանց հայ հարուստի փողի՝ ինչ կյանքի, ինչ որի
մեջ կլինի մեր խալխը. հայ յեկեղեցին, հայ սերտերը,
հայ վարժապետը, հայոց ուսումնարանը և ուրիշ ելի շատ
բաներ կարող են՝ յարաբ առանց հայ վաճառականի հարս-
տության ուժեր ունենալ. չե, չե, հիմարություն ե, ով
մեր հայ վաճառական, հարուստ գասակարգի վրա քարեր
ե գցում:

ԿԱՐՈ ԽԱԺՍՄ.— (Լցնում ե քաժակները զինով) Ես ել,
Արտեմ աղա, քո կենացը, քո ողուշաղի կենացը. ցանկա-
նում եմ շուտ ազատվես ես զազաններից:

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.— Այ, շնորհակալեմ, շնորհակալ եմ,
Կարո ջան. քեզ ել Աստված տա են, ինչ վոր քո սիրան
ե ուզում. զիտեմ քո սիրան են ե ուզում, վոր ես դժոխ-
քից ազատվես ու ազգին լավ ծառայես:

ԿԱՐՈ ԽԱԺՍՄ.— Արտեմ աղա, կեցցե հայ ազգը,
կեցցե մեր միությունը, առանց մեր միաբանության՝ չկա
փրկություն (քաժակները դատարկում են.) հետո Կարոն

վերկենալով Արտ. Սոլոմոնովիչի ձեռքից ընծում ե յեւ
յերգում փոփոխոված):

Չերիք յեխենք, ցույց տանք թե մենք հարազատ,
չին քաջերի արյունիցն ենք և ազատ,
թեև չունենք վոչ սուր, վոչ թուր, վոչ նիզակ,
Մեր բահերն ել կանեն նրանց շանսատամ:

(Կարոն սկսում ե Արտ. Սոլոմոնովիչի հետ շարժում-
ներ անել, պար գալ յեւ ծայրեր հանել. հանկարծ դնակը
(Ֆորտոչկա) քացվում ե լավում վերակացվի ծայրը):

ՎԵՐԱԿԱՅՈՒ ՆԻԿԻՏԵՆԿՍ.— (Նկատում ե նրանց պար
զալիս) Այ քեզ բան, դադարեցեք. Կարո Խաժամուժյան.
պատրաստվեցեք, հավաքեցեք ձեր իրերը:

ԿԱՐՈ ԽԱԺՍՄՈՒԺՅԱՆ.— Արտ. աղա, շուտ, շուտ, զի-
նին թագցրու, ես շան վորդիքը մեր քեֆը խարաբ արին
(Արտ. Սոլ.-ը զինին թագնում ե, զակուակեղենը շտապ
հավաքում. Կարոն անորոշ հայոյական խոսքեր արտասա-
նելով հավաքում ե իր իրերը):

ՎԵՐԱԿԱՅՈՒ ՆԻԿԻՏԵՆԿՍ.— (Դուռը քացում ե) Արե-
ստանա Կարո Խաժամուժյան, ձեզ տեղափոխում են նա-
հանգական բանտը, դե գուրս յեկեք, շուտով:

ԿԱՐՈ ԽԱԺՍՄՈՒԺՅԱՆ.— (Դիմելով Արտ. Սոլոմոն-
ովիչին) Դե մնաա բարով, Արտեմ աղա. մեզ բաժանում են
միմյանցից, բայց ազգի միությունը անխախտ ե (միմյանց
հետ համընդմեջ հետո՝ Կարոն դուրս ե գնում, դուռը
փակվում ե):

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.— Տարան Կարոյին. մենակ մնացի. լավ
եք թե վատ Կարոն, ելի մի ձեն տվող, խոսող կար մոտս.
հիմի մենակ բայցուշ մնացի. ո՛ր տարան Կարոյին, ինչ-
պիտի անեն նրա հետ, Աստված զիտե. հիմի, Արտեմ Սո-
լոմոնովիչ, մենակ ես, վայ տուր գլուխդ, փիքը ու դարդի
մեջ հալ ու մաշ ելի մեն մենակ, տանջվիր ու սատկիր շան
պես ես դժոխքի մեջ, ո՛ւմ ինչ գործ, ո՛ւմ ինչ վրաս: Աստ-
ված, յարաբ ինչ ես փիքը անում քո ստեղծածների մասին...

Պ Ա Տ Կ Ե Ր Զ

ԱՐՏԵՄ ՍՈՂՈՄ ՈՆՈՎԻԶ. — (Մենակ, սաստիկ ընկճված ու հուսահատ). Վայ իմ սրին. (յեւկու ձեռքով զարկում ե գլուխը). Ես ինչ բաներ լսեցի դապրոսին, ես ինչ բաներ ասեցին, թե պրակուրորը և թե ժանգարմ. քննիչը. քո մաղաղի կուշտը, տրոտուարի վրա, ասում ե, բոմբ ե տուքվել, մարգիկ են կոտորվել ու յարայու ելել. դու պետք ե իմանաս, դու պետք ե տեսած լինես, ասում ե, թե ով ե, գցել բոմբը. մենք ունենք, ասում ե, հաստատ տեղեկություններ, վոր քո մաղաղի մարգիկն են գցել. քո ծառայողները, քո պրիկաշիկներն են արել, դու ել մասնակից ես ելել: Ու՞ր ե քո պրիկաշիկ Ոհանեսը, ասա նրա տեղը, չենք գտնում նրան: Յեթե դու բոլորը գրուստ չանես, կնշանակե դու եդ գործին մասնակից ես, ասում ե: Ռասարել, Սիբիր, կատորգա. այ թե ինչ պատիժ կլինի քեզ, ասում ե:

Յես ասում եյի. ախր, պարոն պրակուրոր, պարոն ժանգարմ, ձեր հոգուն մեռնեմ, ինձ մի բաթմիշ անեք, եդ բանը վոր պատահել ե, յես դուքանում չեմ ելել. եդ բանից բեխաբար եմ, չեմ տեսել, չեմ գիտի ո՞վ ե արել, թե վորտեղ ե Ոհանեսը, տեղը չեմ իմանում, թե չե կասեյի: Եսենց խաթա ելի, եսեն շառ կլի, վոր գցում են վրես: Ամա մի բան ել փիքը եմ անում. հալբաթ գրուստ իմ պրիկաշիկ Ոհանեսն ե արել, ախր նա դաշնակցական ե, թուրքեր կոտորելու մեջ դոչադ. կարելի ե նա ե արել ու հիմի կորել ու անգումանգ ե ելել ու նրա տեղ ինձ են խաթի մեջ գցում: Բալքամ դորթ, ես կարո խաթամուժյանը նրա ընկերն ե, եդ գործում խառն ե ու բռնեցին, ամա Ոհանեսը վախտին փախավ, թախկացավ, ով գիտե,

հենց գրուստն ետ ե, վոր կա: Ախ, լիրբ ավազակ Ոհանես, թե ետեղից դուս կգամ ու կիմանամ տեղդ, կտեսնես թե ինչ ոյին կբերեմ գլուխդ: (Վերակացուն ղուռը քացում ե, մտնում ս պարս շնիկ Սանդրոն շշտակը (հատակի խոզանակո) ձեռքին՝ կամերան ավելելու համար):

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ. — (Սկսում ե ավելել). Արտեմ աղա, սիրտս հանգիստ չե. բերդում մեծ շփոթ ու դալմադալ ե, հալբաթ ես ե բունտը կսկսվի:

ԱՐՏ. ՍՈՂՈՄ. — Վհնց թե բունտ. ինչեր ես ասում, բերդումն ել բունտ կրլի:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ. — Հա բունտ. բունտը բաս վոնց կը լինի. եսա հավաքվել են մենձ բալը, պոլիտիկ սոցիալիստ արեստանտները միտինգ են սարքել, տաք տաք ճառեր են ասում: Վերջին տարիները բունտեր շատ եմ տեսել բերդում:

ԱՐՏ. ՍՈՂ. — Բա բունտի վախտը, արեստանտներին խոմ կկոտորեն:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ. — Բաս չեն կոտորում, բայց ելի բունտ են անում:

ԱՐՏ. ՍՈՂ. — (ԱՅ ու ղուռը բռնած). Տեր-Աստված, Տեր-Աստված, դու չար սատանից հեռու պահի մեզ. (ըարծրանում ե մեծ աղմուկ, սկսվում իրարանցում):

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ. — (Գունատվելով). Այ սկսվեց բունտը (ավելը վեր ե գցում. փախչում ե դուրսը. աղմուկըն ու գտոցը սաստկանում են. լսվում են «կորչի Պոլյանսկին, կորչին ցարական ղահիմները» — «կորչի ցարական ռեժիմը» — «կեցցե ազատությունը» — «կեցցե հեղափոխությունը» — «տղերք, քոնեք, տվեք, խփեք, շանսատակ արեք» յեվ այլ այսպիսի խոսքեր: Հարդվում են ապակիներ, փայտեր ու գեռաններ են ընկնում. կարծես, ըերդի շենքը խորտակվում ե. լսվում ե 23 անգամ հրացանագարի):

ԱՐՏ. ՍՈՂ. — (Սարսափահար). Վայ ես ինչ կրակ ե (դես դնն ե ընկնում մի պատից մյուս պատը, մի անկյու-

նից մյուս անկյունը, վախենալով թե զնուակն իրան կարող ե ողբալել). Վայ ինձ կսպանեն, ազատեցեք ինձ, վայ Կապուշկա ջան, Շուշան ջան. վայ Գիգուլի ջան. յես առանց սպանվելու մեռա, ոգնեցեք (անուղաակիորեն ընկնում, փոփում ե հատակի վրա և գրեթե ուշագնաց մնում ե մի քանի վայրկյան. հրացանաձգությունը դադարում ե, աղմուկն ու գոռոցոցը քիչ քիչ թուլանում ե, և հետո բոլորովին լռություն ե տիրում. (մտնում ե պարաշնիկ Սանդրոն ապշում ե, տեսնելով Արտեմ Սոլովոնովիչին թավալված գետնի վրա):

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—Արտեմ աղա, Արտեմ աղա, Բնչ ե պատահել, ինչի ես ընկել:

ԱՐՏ. ՍՈՒ.—Հը, հը... վայ յես մեռա:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—Վոնց թե մեռա:

ԱՐՏ. ՍՈՒ.—Սանդրո ջան, տես խոմ գյուլեն չի կպել ինձ:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.— (Ծիծաղելով). Ինչ գյուլա, ինչ բան, Արտեմ աղա. գյուլեն բերդի հաստ պատը խոմ չեք ծակի:

ԱՐՏ. ՍՈՒ.—Մի քիչ ջուր. ջուր չլինի մի քիչ գինի. (Սանդրոն գտնում ե գինով գավաթը):

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—Առ, սա կսաղացնի քեզ:

ԱՐՏ. ՍՈՒ.— (Գավաթից խմելով). Ոհ, սա լավ եր, շնորհակալ եմ (տնքալով վեր ե կենում):

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—Բունտը վերջացավ. արեսաանտներից 3 մարդ սպանվեց, հինգը յարալու են ելել. Նաչալնիկ Պոլյանսկուն գերանով գլուխը ջարդել են, առում են չի ապրի, 1 վերակացու ու 2 զինվորներ ել վերափորված են (շարունակում ե ավելել):

ԱՐՏ. ՍՈՒՈՄ.—Վայ, վայ անմեղ խալխ. լավ ե յես պրծա մահից. հա, բունտեր անում են քաղաքում սոցիալիստները. բերդում ով ե իմացել բունտը:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—Բերդում ել եզ պոլիտիկ սո-

ցիալիստներն են բունտ անում. նրանց որինակին ել հետևում են ուզալովները:

ԱՐՏ. ՍՈՒՈՄ.—Ախ, եզ սոցիալիստները, կոտորվեն նրանք, կոտորվեն. (պարաշնիկ Սանդրոն դուրս ե գնում, վերակացուն շտապ դուռը փակում ե):

ԱՐՏ. ՍՈՒՈՄ.—(Մենակ). Հերիք չե, վոր բերդը մի դժոխք ե, հալա բունտ ել են անում, վոր դժոխքի կրակին ավելի կրակ ավելացնեն. սա ինչ միտք, ինչ խելք ե, ասեք Աստված սիրեք. դուսը ինչ դալաթներ ասես անում եք, իշխանությունը պատժում ե. բերդն ե գցում ձեզ. տո խոնարհ ելեք, սուս կացեք ելի. այ, անմեղ տեղը 5-6 մարդ կոտորվեցին, յարալու ելան, բաս եզ լավ ե. ես մախլաս. ես անտեր դժոխքում ել չեն թողնում, վոր մարդ կրակի մեջ հանգիստ մեռնի, կրակն ավելի ել թեթացնում են. վոչ ուտել կա, վոչ խմել, վոչ ել իշտան. տանջանք, տանջանք ու ելի տանջանք:

Եհ, հանեմ զակուսկեղենը ու գինին, մի քիչ չոուլամիշ անեմ (առաջ գինին ե վերցնում—գավաթով խմում, հետո զակուսկեղենի մնացորդներն ե սեղանի վրա դարսում յեվ սկսում ե ազան ուտել յեվ շուտ-շուտ գինի խմել). ոխայ, ես գինին վոր չլինի, խո մարդ, փիքրից ու դարդից կուզեմ: Շատ ափսոս, վոր քիչ ե մնացել (գինու ամանը ժած ե տալիս) ելի կա մեջը. զակուսկեղենն ել հատնում ե:

ՎԵՐԱԿԱՅՈՒ ՆԻԿԻՏԵՆԿՈ — (Փորտոշկան քացելով). Պարոն Դոլմագով, իմացեք, վոր ժանդարմական քննիչ բոսմիստը այցելություն ե անում կամերաները, ես բուպեյիս ձեզ մոտ կմտնի (դռնակը փակվում ե. Արտեմ Սոլովոնովիչը ահ ու դողը բռնած՝ շտապ գինին թագցնում ե, զակուսկեղենը սեղանից հավաքում ե, թղթելով մի անկյունն ե գցում):

ԱՐՏ. ՍՈՒՈՄ.—Այ, զահրումար ըլի ձեզ ամենքիդ. պիտի ամեն ինչ հառամ են անում. գելից ենքան չեմ վա-

խենում, ինչքան եղ ժանդարմներից ու պոլիցից. (Արտեմ Սողոմոնովիչը խնդ՞ ու կրակի տեսք ե ընդունում. գունատ-ված, մեջքը կուացած, գլուխը խոնարհ, ձեռքերը դռշի վրա դրած՝ ըոպե առ ըոպե սպասում ե ժանդ. ըոտմեստրի ներս մտնելուն. վերակացուն դուռը բացում ե, հայտնվում ե ըոտմիստրը):

ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ ԲՈՏՄԻՍՏՐ.— (Խստորեն). Պարոն Դոլմագով, դապրոսից հետո ինչ մտածեցիք, ի՞նչ կարող եք ասել. խոստովանվում եք արդյոք, հայտնում եք ամեն բան թե վոչ. իմացեք, վոր ձեր որերը արդեն համբարվածեն, յեթե ելի շարունակեք համառությամբ ուրանալ ամեն բան:

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.— (Մեջքը կորացած, վողորմելի կերպարանքով յեվ ձայնով). Պարոն ժանդարմի նաչալնիկ (ընկնում ե վոտները), Աստված, յերկինք, յես վոչինչ մեղք չունեմ, ի՞նչ անեմ ախր, ի՞նչ ասեմ, վոր վոչինչ չգիտեմ (վողորմելիորեն վողորում ե):

ԺԱՆԴ. ԲՈՏՄԻՍՏՐ.— (Խրոխտ). Վեր կացեք, այդպիսի խաղերով ու ոյիններով մեզ չեք կարող խաբել, ճշմարտությունը վարագուրել. դուք մեծ հանցավոր եք և մեծ պատիժ ել կստանաք:

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.— (Հազիվ վոտի կանգնելով). Պարոն Նաչալնիկ, ինայեցեք իմ կյանքը, իմ յերեխաներին. իմ ոջախը բաթմիշ միք անի անմեղ տեղը:

ԺԱՆԴ. ԲՈՏՄԻՍՏՐ.— Անմեղ տեղը, հա, հա, հա, դուք ուզում եք, վոր ձեր խոսքին հավատանք, հա, քանի, վոր մենք մեր վկաներն ունենք, տեսել են, գիտեն ամեն բան:

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.— Աղա ջան, իշխան ջան, խղճացեք, մեղք եմ, անմեղ եմ, անմեղ, յեթե յես մի բան գիտենայի, Աստված, Քրիստոս, չեի ծածկի ձեզնից, ինայեցեք իմ քյուլփաթին:

ԺԱՆԴ. ԲՈՏՄԻՍՏՐ.— Խնայել ձեզ—վոչ մի ժամանակ, պատմով քյավթան. այդ հասակում այդքան համառ լինել—վոչ, ամենածանր պատժի արժան եք դուք:

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.— 3 ամիս ե արդեն, վոր բերդում հալվում, մաշվում եմ, ել հարաքաթ, ույժ չե մնացել:

ԺԱՆԴ. ԲՈՏՄԻՍՏՐ.— Վոչ թե 3 ամիս, այլ 3 անգամ 3 տարի կփթեցնենք բանտում, յեթե ամեն ինչ դրուստը չասես. դեռ ելի լավ ե, վոր բանտում հոգիդ փչես. բոմբ պցողներին և նրանց գործին մասնակցողներին ուղղակի բաստրել ենք անում:

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.— (Մահապարտի ձայնով). եդ ինչ եք հրամայում, աղա ժանդարմ, զթացեք ի սեր Քրիստոսի:

ԺԱՆԴ. ՏՈՏՄԻՍՏՐ.— Վոչ մի գթություն:

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.— Իշխան ջան, աղա ժանդարմ, աղա նաչալնիկ, տես ինչ հալի եմ ընկել, հալվել եմ, լղարվել, վոսկոր դարձել (ցույց ե տալիս զոտին, վոր համարյա ընկնում ե մեջքից):

ԺԱՆԴ. ԲՈՏՄԻՍՏՐ.— (Հեզնությամբ). Հա, վոնց չե, յերևում ե վոր փորդ շատ ե բարակել. վերջին խոսքն եմ հայտնում. կսպասենք դարձյալ 1-2 որ, վորից հետո, յեթե ամեն ինչ չխոստովանեք, կյանքիդ հարցը արդեն լուծված պետք ե համարել. բաստրել կամ հավիտենական կատորգա...

Ասա ուր ե քո պրիկաչչիկ Ոհանեսը, նա դաշնակցական ե... Նա ե բոմբ պցել... մարդիկ կոտորել:

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.— Աղա ժանդարմ, հա գիտեմ, վոր նա դաշնակցական ե, բայց թե նա բոմբ ե պցել, մարդիկ կոտորել, հախ Աստծու, չեմ տեսել. թե նա վորտեղ ե հիմի, եդ ել չեմ իմանում, սուտ վոնց ասեմ: Յեթե դուսը լինեի, կարելի ե ամեն բան հաստատ իմանայի, իշխանության ել կհայտնեի անպատճառ. աղա ժանդարմ, իշխան ջան, իմ կյանքի, իմ յերեխաների, ընտանիքի տեր ու իշխան, վողորմած, վողորմած յեղիր. (կրկին վոտներն ե ընկնում):

ԺԱՆԴ. ԲՈՏՄԻՍՏՐ.— Վերջ տվեք այդ կապիկություններին, այսոր վազը կհայտնվի ձեզ ձեր դատավճիռը:

(դուրս ե գնում. Արտեմ Սոլոմոնովիչը կիսաշոք նստած մնում ե մի քուպե աղիողորմ դրուժյան մեջ. կարծես լեզուն պատանձված՝ հազիվ լսելի ու հասկանալի քառեր ու ձայներ ե արձակում):

ԱՐՏ. ՄՈԼՈՄ.— Ինձ բաստրեկ... Ինձ Սիբիր—կատրը-ժնի բաբոտ: Կյանքիս վերջին որերը... Ախ իմ ազիզ ջան, իմ պլպլան Կատյուշկա ջան, իմ խեղճ ու կրակ քյուլբաթ — Շուշան ջան, Գիգոլի ջան, ձեր ջանին մեռնեմ, յես բա-ժանվեմ ձեզանից հավիտյան, մահ, կատորգա. ոո՛, անաստ-վածներ, գազաններ, մարդասպաններ. ինձ անմեղիս մահ-վան դատապարտել—գնդակահարել առանց վկաների, առանց արդար դատաստանի. սա ի՛նչ կարգ ե, սա ի՛նչ որենք. ոգնեցեք ով բարի մարդիկ. աշխարհս անարդարների չա-րագործների, մարդասպանների ձեռքին ե, ազատեցեք ինձ, ազատեցեք իմ քյուլթափը, ազատեցեք աշխարհը... (փոքր ինչ զգաստանում ե, ույժ ե առնում յեվ կարողանում ե վոտի կանգնել. վողքի ձայնով). պետք ե գրեմ նամակ, վերջին խոսքս ասեմ, վերջին հրաժեշտը տամ իմ սիրելի-ներին (գլխի մագերից ըննում) ոո, անբախտ մարդ, ան-գութ ճակատագիր (նստում ե յեվ գրում, հետո ընդհա-տումներով կարդում վողքալի ձայնով):

Իմ կյանքի արեվ, իմ անգին Կատյուշկա ջան, իմ սիրելիներ Շուշան ջան, Գիգոլի ջան,

Գրում եմ ձեզ ճշմարիտը, ել չեմ կարա թագցնել, իմ բանս պրծած ե, կյանքիս ճակատագիրը վորոշված, այ-սոր վաղը ինձ կամ բաստրեկ կանեն, կամ հավիտյան Սի-բիր-կատորգա կվճռեն. եդինց կտրական հայտնեց ժան-դարմական իշխանավորը. ել փրկություն չկա, բոմբ զցե-լու ու մարդիկ կտորելու մեղքը ինձ վրա դրեցին: Իմ սիրելիներ, իմ թանգագին ամուսին ու զավակներ, սա իմ վերջին խոսքն ե, վերջին հրաժեշտը ձեզ. լաց մի լինեք, յես ել լաց չեմ լինում (հուզվում ե ու վողքում) այդ եր

իմ ճակտիս վրա գրված, իմ ճակատագիրը. յես բաժան-վում եմ ձեզնից հավիտյան, բայց դուք լավ կացեք, լավ ապրեցեք, միայն միշտ հիշեցեք ձեր անբախտ հորը: Նա կորչում ե անմեղ տեղը, ինչպես շատ անմեղներ կորչում են այս անարդար աշխարհում: Ձեր սերը կմա միշտ ձեր հոր սրտում մինչև իր վերջին շունչը:

Դե, մնաք բարև, սիրելիներ, համբուրում եմ, համ-բուրում եմ ձեզ, իմ հոգին ձեզ հետ ե միշտ թե այստեղ ե թե են աշխարհում: Անմոռաց պահեք իմ հիշատակը:

Ձեզ անսահման սիրող հայր՝ հայտնի սովդա-բյար, այժմ նաչար՝ Արտեմ Սոլոմոնովիչ:

(Նամակը դնում ե ծրարի մեջ):

ՎԵՐԱԿԱՅՈՒ ՆԻԿԻՏԵՆԿՈ.— (Դուռը բացելով՝ ներս ե թողնում պարաշնիկ Սանդրոյին պատվիրելով) Վերջացրու ինչ վոր անելու ես, գնա շուտով ընդհանուր կամերա, ինչ վոր այնտեղ պահանջում են, աղմուկ են բարձրացրել...
ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.— Այս բոպեիս Նիկիտենկո (տա-լով Արտեմ Սոլոմոնովիչին մի քանի իրեր) Արտեմ աղա, այս շորեղենը տանից են ուղարկել. հայտնել են նույն-պես, վոր ուտելեղեն կուղարկեն քեզ այսօր:

ԱՐՏԵՄ ՍՈԼՈՄՈՆ.— Եհ, Սանդրո ջան, եսոր եգուց ել չեմ լինի. իմ աչքումս ել վոչինչ չի գալիս. խնդրում եմ քեզ վերջին անգամը, ես նամակը վոնց վոր լինի հաս-ցրու իմ ողլուշաղին. ուրիշ ել վոչինչ:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.— Աչքիս վրա, Արտեմ աղա, ինչի ես ետենց բաներ ասում, Աստված վողորմած ե, ա-մեն բանին վերջ կըլի:

ԱՐՏ. ՍՈԼՈՄՈՆ.— Հա, Աստված վողորմած ե, ամեն բանին վերջ կըլի, իմ բանին ել խոմ վերջն եկել ե: Հաս-ցրու եդ նամակը, խնդրում եմ, ես ե իմ վերջին խնդի-բը քեզ (պարաշնիկը նամակը վերցնելով դուրս ե գնում. դուռը փակվում ե. 1—2 քուպե անց ինչ վոր մարդկանց

քայլվածքի յեվ խոսակցութեան ձայն և լսվում ըմբռնողի կամ
մերաների միջանցքում:

ՎԵՐԱԿԱՅՈՒ ՆԻԿԻՏԵՆԿՈ.—(Փորտոշկան բացում և
յեվ ձայն տալիս) Պարոն Դոլմազով, բանտապետը այստեղ
է. սկսել է այցելութիւններ անել կամերաները:

ԱՐՏ. ՍՈՂՈՄ.—(Ինքն իրան) Եհ, գալիս է գա, ինձ
ինչ, վոնց վոր ուզում է տեսնի ինձ, միւնուշն է յես չկամ
ել ես աշխարհումս. (ըստը բացվում և, մտնում և ըմբ-
տապետը վերակացունների հետ):

ԲԱՆՏԱՊԵՏ.—Պարոն Դոլմազով, հենց այս ժամին գրա-
վոր կարգադրութիւն ստացվեց ժանդարմական Վարչու-
չութիւնից, վոր դուք ազատվում եք բանտից բոլորովին,
հավաքվեցեք և մտեք նախ 1—2 բոպեյով կանցելյարյա:

ԱՐՏԵՄ ՍՈՂՈՄ.—(Իրան կորցրած շանթահար տև-
դեկութիւնից). Վա, դրուստ, Նաչախիկ ջան, քո հոգուն
մեռնեմ (ընկնում և վրտները յեվ ուրախութիւնից լաց-
լինում):

ԲԱՆՏԱՊԵՏ.—(Ժպտալով) Վերկացեք, պատրաստ-
վեցեք:

ԱՐՏԵՄ ՍՈՂՈՄՈՆ.—(Վեր և կենում) Եդ ինչ խաբար
տվիր, եդ ինչ ուրախութիւն բերիր, այ էմ մեծավոր,
այ իշխան ջան:

ԲԱՆՏԱՊԵՏ.—Շտապեցեք, հավաքեցեք ձեր իրերը
(հայտնվում և պարաշնիկը. կամերայի շեմքին սպասողա-
կան դիրք և ընդունում):

ԱՐՏ. ՍՈՂՈՄՈՆ.—(Շտապ հավաքում և իր անկողինը,
շորերը յեվ այլն) Սա ինչ բան եր, յերագ է թե ինչ. սպա-
սում եի բաստրելի, իսկ հիմի ազատութիւնն, կյանք. ո՞ն,
ես թավուր ուրախութիւնից կարելի է ցնդվել:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—(Ոգնում և իրերը հավաքելու)
Արտեմ ադա, մշակ բերել վեշիքը տանի թե ֆայտոն կան-
չենք:

ԱՐՏ. ՍՈՂՈՄՈՆ.— Ի՞նչ մշակ, ֆայտոն ֆայտոն (այդ

միջոցին Արտեմ Սոլոմոնովիչը հանկարծ կանգ և առնում.
իրեն վատ զգալով ձեռքը սրտի վրա դնում). Վա ես ինչ
պատահեց. սիրտս, սիրտս (զոնատվում և, այլայլվում).
սիրտս, ոգնեցեք (որորվում-ընկնում և հատակի վրա. ոգ-
նութեան են հասնում՝ վերակացուն ու պարաշնիկը. նրան
վերցնում են յեվ մահճակալի վրա պառկեցնում. Արտ.
Սոլոմոնովիչը կյանքի նշաններ կարծես այլ եվս չի ցույց
տալիս. այս բոլոր ժամանակ ըմբտապետը հարցական
դարձած՝ հետեվում և մընչեվ վերջ այդ անակնկալ դեպքի
վախճանին):

ՎԵՐԱԿԱՅՈՒ ՆԻԿԻՏԵՆԿՈ.—(Բանտապետին) Ձերդ
մեծապատվութիւնն, կհրամայեք բժիշկ կանչել:

ԲԱՆՏԱՊԵՏ. Գնա շուտով բժիշկի հետեից. նա հիմա
ամբուլատորյայումն է. (վերակացուն գնում և. ըմբտա-
պետը ուշադրութեամբ նայելուց հետո) Ել ինչ բժիշկ, բանը
բանից անցել է. հանկարծամահ յեղավ, անշուշտ սրտի
պայթիւնից:

ՊԱՐԱՇՆԻԿ ՍԱՆԴՐՈ.—(մտտենալով) Խեղճ՝ Արտեմ
ադա, բա վոր ասում եի կազատվես, կազատվես, այ վոնց
ազատեցին, են աշխարհը լրկեցին:

Վ. Ա. Բ. Ա. Գ. Ո. Ի. Ե. Բ.



ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Բանվորների սպանողագրությունը Արևմտյան Յեվրոպայում
և Ռուսաստանում» Թիֆլիս, 1894 թ.
2. «Փուչ զավակ» զրամա 5 դործ. » 1905 թ.
3. «Рабочее движение и социал-демократия на Кавказе»
с предис. Г. В. Плеханова,
I изд. Женева 1910 г.
II изд. (Госиздата) Москва, 1923 г.
- 4 «La guerre mondiale et le socialisme»
Լա Շո-դը-ֆոն (Շվեյցարյա) 1915 թ.
5. «Անցյալի հիշողություններից» Թիֆլիս, 1918 թ.
6. «Անդրկովկասի քաղաքական կյանքը 1918 թվին»,
Թիֆլիս, 1919 թ.
7. «Записки Революционера» неперіодическ. из-
дание № 1 Тифлис, 1920 г.
8. «Материалы по истории отпадения Закавказья от России»
Тифлис, издание «Красн. Кн.» 1923 г.
9. «Բայց և այնպես նա շարժվում է» (E pur si muove...), զրա-
մա 4 դործ., Սիբիրի քաղաքական աքսորյալների կյանքից
Թիֆլիս, 1925 թ.
10. «Արտեմ Սոլոմոնովիչ Դոլմազովը բանտում» տրագի-կոմեդիա
2 դործ. 5 պատկ. Թիֆլիս, 1926 թ.

Պատասխանում է արագուրյան համար յեվ լույս կեսանի «Закнига»-ի
հրատարակությանը հեղինակի

„Мировая война и Социализм“

Թարգմանություն ֆրանսերենից:

ՀՀ Ազգային գրադարան



NL0348878

40794

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.



Հեղինակի հասցեն՝

Тифлис, 1-ый Гунибек. тупик, 8, кв. 1.